ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2025 թվական, N 120-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի հուլիսի 28-ի արտահերթ թիվ 12 նիստի հետևյալ օրակարգը.
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի հուլիսի 28-ի արտահերթ թիվ 12 նիստի օրակարգը հաստատելու մասին.
   1.2 «Ալավերդի քաղաքի սպասարկում և բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու, կանոնադրական կապիտալը, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին.
   1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Կանոնադրությունը հաստատելու մասին.
   1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը հաստատելու մասին.
   1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
   1.6 Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0088-0001, 06-002-0088-0002, 06-002-0088-0003, 06-002-0088-0004, 06-002-0088-0005, 06-002-0088-0006, 06-002-0088-0007 և 06-002-0088-0008

ծածկագրերով համայնքային սեփականության հողամասերը քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակելու մասին.

1.7 Համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու և նրանց մեկարկային գները հաստատելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2025 թվական, N 121-Ա

«ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերով, 81-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հիմնադրման միջոցով ստեղծել «ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն):
2. Հաստատել Ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը համապատասխանում է 100 հատ հասարակ բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 10 000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով: Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Ալավերդի համայնքին:
3. Հաստատել Ընկերության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
4. Հաստատել Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ընկերության կանոնադրության պետական գրանցումը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			

3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱԲԻԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հաստատված է ՀՀ Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու
«28» հուլիսի 2025թ.
N 121-Ա որոշմամբ

ԿԱՋՄՎԱԾ Է 28.07.2025Թ.
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ԵՎ ԲԱՂԿԱՑԱԾ Է 12 ԹԵՐԹԻՑ
ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«_____ » _____ 2025Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ _____

ՀՎՀՀ _____

_____

«ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ք.ԱԼԱՎԵՐԴԻ

2025 ԹՎԱԿԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ալավերդի քաղաքի սպասարկում և բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական Ընկերություն է:

2. Ընկերությունը ստեղծվել է Ալավերդի համայնքի ավագանու՝ 28.07.2025 թվականի թիվ 121-Ա որոշմամբ:

3. Ընկերության միակ բաժնետերը Ալավերդի համայնքն է, որի անունից հանդես է գալիս Ալավերդի համայնքի ղեկավարը:

4. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումը հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմներ և ձևաթղթեր, նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

5. Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

6. Հիմնադրի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, օրենքով և սույն կանոնադրությամբ:

7. Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքի առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար:

8. Ընկերության բաժնետերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում և իրեն պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

9. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ալավերդի քաղաքի սպասարկում և բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերություն:

կրճատ՝ «Ալավերդի քաղաքի սպասարկում և բարեկարգում» ՓԲԸ:

Ռուսերեն լրիվ՝ закрытое акционерное общество ««Содержание и благоустройство города Алаверди»

կրճատ՝ ЗАО ««Содержание и благоустройство города Алаверди»

անգլերեն լրիվ՝ " Maintenance and improvement of the city of Alaverdi" Closed Joint Stock Company

անգլերեն կրճատ՝ " Maintenance and improvement of the city of Alaverdi" CJSC

10. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, քաղաք Ալավերդի, Սանահին- Սարահարթ 1/7 շենք, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկի փողոց, շենք 50:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

11. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

12. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

1) Բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի մաքրման , մասնակի վերանորոգման աշխատանքներ

2) Բազմաբնակարան շենքերի խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ

3) Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի բարեկարգման, մաքրման և լուսավորության համակարգերի սպասարկման աշխատանքներ

4) 5 տարի վաղեմությամբ նորոգված տանիքների նորոգման աշխատանքներ

5) Բազմաբնակարան շենքերի տանիքների՝ մինչև 10 քմ հատվածի վերանորոգման աշխատանքներ

6) Բազմաբնակարան շենքերի բակերի և խաղահրապարակների մաքրման և բարեկարգման աշխատանքներ

7) Բազմաբնակարան շենքերի նկուղների մաքրման և ախտահանման աշխատանքներ

8) Բազմաբնակարան շենքերի վերելակների մաքրման աշխատանքներ

9) Ալավերդի քաղաքի բնակիչներին՝ Ալավերդու համայնքապետարանի համար հիմք հանդիսացող տեղեկանքների, բնութագրերի տրամադրման աշխատանքներ

10) Ծանուցումների տրամադրման աշխատանքներ

«Ալավերդի քաղաքի սպասարկում և բարեկարգում» ՓԲԸ-ն հիմնադրի որոշմամբ կատարում է այլ գործառույթներ

13. Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

16. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

17. Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց և առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք:

18. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի: Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի՝ երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

19. Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

20. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

21. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

22. Ընկերությունն իրավունք ունի.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք, դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

2) օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքները, լինել գրավառու և գրավատու,

3) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր, ստանձնել իրավունքներ և կրել պարտավորություններ,

6) ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով,

7) ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը գնորդներին, օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույք, ծառայություններ մատուցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում, նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք կամ ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

8) ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,

9) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

23. Ընկերությունը պարտավոր է՝

1) Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական, վիճակագրական կամ այլ հաշվետվություններ,

2) Աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,

3) Պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքված պայմանագրերը չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

4) Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,

5) Ապահովել ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայական կանոնադրության, գույքի նկատմամբ, ինչպես նաև գույքային իրավունքներ հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների կանոնադրությունների, հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Ընկերությանը փոխկապակցված անձանց նշանակալից ու խոշոր բաժնետերերի ցուցակների, կնքված պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը իր գտնվելու վայրում,

6) Իր բաժնետերերին հնարավորություններ ընձեռել ստեղծել ծանոթանալու Ընկերության վերը թվարկված փաստաթղթերի հետ,

7) Ընկերության բաժնետերերի թիվը օրենքով սահմանված քանակը գերազանցելու և մեկ տարվա ընթացքում այդ թիվը մինչև սահմանված քանակը չնվազեցնելու դեպքում վերակազմավորվել բաց բաժնետիրական ընկերության,

8) Կրել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

24. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկնության կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

25. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, բաժանված 100 (հարյուր) հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10000 (տասը հազար) ՀՀ դրամ

անվանական արժեքով: Ընկերության բոլոր 100 բաժնետոմսերը տեղաբաշխված են լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Ալավերդի համայնքին:

26. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

27. Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին մոտայն սույն կանոնադրությամբ սահմանված հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում, մոտայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված լինելու դեպքում: Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությանն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

28. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման և այն կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումներն ընդունվում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

29. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեության ընթացքում առաջացած վնասները ծածկելու համար: Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դրանց մի մասի ձեռք բերմամբ և մարմամբ:

30. Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:

31. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և սույն կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումներ ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

32. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշումն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում Ընկերությունը գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին:

5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

33. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել միայն սովորական բաժնետոմսեր, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր:

34. Ընկերության բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են:

35. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից 1 տարվա ընթացքում:

36. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

37. Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

38. Ինչպես Ընկերության հիմնադրման, այնպես էլ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի արժեքը սահմանվում է հիմնադրի կողմից և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

39. Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվառման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

40. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

41. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումն իրականացվում է ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ:

42. Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

43. Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:

44. Ընկերությունն իրավունք ունի թողարկել՝

1) Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր,

2) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր,

3) առանց ապահովման պարտատոմսեր:

45. Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ Ներկայացնողի պարտատոմսեր:

46. Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք:

47. Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 % տոկոսի չափով: Ընկերության պահուստային հիմնադրամի ձևավորման կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

48. Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից առնվազն 5% տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

49. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

50. Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

51. Շահաբաժնի ձևով չվճարված կամ այլ եղանակով օգտագործված շահույթը տեղաբաշխվում է Ընկերության հայեցողությամբ:

52. Բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, սոցիալական, զարգացման և այլ հիմնադրամներ:

53. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

54. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

55. Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող անձն իրավունք ունի՝

1) մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

2) մասնակցել Ընկերության կառավարմանը,

3) ստանալ շահութաբաժին Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

4) օրենքով նախատեսված դեպքերում առաջնահերթ կարգով ձեռքբերել ընկերության կողմի տեղաբաշխվող բաժնետոմսերը,

5) ստանալ գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ, այդ թվում՝ հաշվապահական (ֆինանսական) փաստաթղթեր, հաշվետվություններ, հաշվապահական գրքեր, ծանոթանալ Ընկերության արտադրատնտեսական կամ այլ գործունեությանը, ուսումնասիրել այն անձամբ կամ դրա համար ներգրավել համապատասխան մասնագետներ (այդ թվում՝ փորձագետներ),

6) Ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի, դրանցում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերին համապատասխան ձայների չափով,

7) Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը,

8) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,

9) օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,

10) օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

56. Բաժնետերը պարտավոր է չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

57. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

58. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից, (կուտակված շահույթից): Ինչպես տարեկան, այնպես էլ միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից:

59. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունության ժամկետը սահմանվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինի:

60. Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի՝ շահութաբաժինների վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան նվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

61. Ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե՝

1) լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,

2) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի հայտ կգա շահութաբաժինների վճարման հետևանքով,

3) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

62. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնում է Ալավերդի համայնքի ղեկավարը:

63. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով, բաժանտերերի ընդհանուր տարեկան ժողով:

64. Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 3 ամսվա ընթացքում:

65. Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

66. Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ալավերդի համայնքի ղեկավարի կողմից, որը որոշում է.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, տեղը և ժամանակը,

2) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը:

67. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում նախագահում է Ալավերդի համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

68. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում և նրա իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

69. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2) Ընկերության վերակազմակերպումը,

3) Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը,

4) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

5) Բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

6) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

7) Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

8) Ընկերության վերստուգողի ընտրությունը /նշանակումը/ և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

9) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

10) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշիվների հաստատումը, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և շահութաբաժինների չափի հաստատումը,

11) բաժնետոմսերի բաժանումը (տարանջատումը) և համախմբումը (կոնսոլիդացիան),

12) Օրենքով նախատեսված դեպքերում գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,

13) Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,

14) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աուդիտն իրականացնող անձի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների սահմանումը,

15) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

16) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերություններում մասնակցությունը,

17) Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների՝ այլ միությունների հիմնադրումը,

18) Հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

19) այլ հարցեր, որոնք օրենքով և սույն կանոնադրության համաձայն սահմանված են որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասության հարցեր:

70. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող, ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ (այլ բաժնետերեր լինելու դեպքում), բացի 71 կետում սահմանված դեպքերից:

71. Սույն կանոնադրության 69-րդ կետի 1, 2, 3, 4, 6, 12 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող, քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, ընդ որում 3 և 6 ենթակետերով սահմանված դեպքերում կողմ ձայների քանակը չպետք է պակաս լինի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

72. Ընկերությունում Ալավերդի համայնքից բացի այլ բաժնետեր չլինելու դեպքում՝ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերով որոշում կայացնում է Ալավերդի համայնքի ղեկավարը: Ընկերության վերակազմակերպման, լուծարման, կանոնադրական կապիտալի նվազեցման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում Ալավերդի համայնքի ղեկավարը որոշումներ կայացնում է միայն Ալավերդու ավագանու համապատասխան որոշման առկայության դեպքում:

73. Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

74. Ընկերության տնօրենը՝

1) Տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,
2) Ներկայացնում է Ընկերությանը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
3) Գործում է առանց լիազորագրի,
4) Տալիս է լիազորագրեր,
5) Սահմանված կարգով կնքում է պայմանագրերը, այդ թվում նաև աշխատանքային: Ընդ որում՝ գրավի, փոխառության կամ վարկային պայմանագրեր կարող են կնքվել բացառապես ընկերության ընդհանուր ժողովի, ի դեմս Ալավերդի համայնքի ղեկավարի հավանության առկայությամբ:
6) Ընկերության վարձու աշխատողների նկատմամբ իրականացնում է գործատուի լիազորություններ,
7) Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթի) և այլ հաշիվներ,
8) Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դրսից վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,
9) Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպման կառուցվածքը և հաստիքացուցակը:
10) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
11) Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին:
12) Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
13) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

75. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է /նշանակում է/ Ընկերության վերստուգող: Ընկերությունում այլ բաժնետեր չլինելու դեպքում վերստուգողին նշանակում է Ալավերդի համայնքի ղեկավարը:

76. Վերստուգողը հետևում է Ընկերության կառարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

77. Վերստուգողի գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող կանոնակարգով:

78. Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության՝ ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

79. Վերստուգողը ստուգումների արդյունքները ներկայացնում է ընկերության բաժնետերերին և ընդհանուր ժողովին: Վերստուգողն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվակշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:

80. Վերստուգողն իրավունք ունի պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:

81. Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

82. Վերստուգողը հաշվետու է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

83. Վերստուգողի վարձատրության և կամ վճարվող փոխհատուցման չափերը պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր Ժողովի որոշմամբ:

84. Վերստուգողը կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված, բաժնետիրոջ կողմից նշանակված ցանկացած ֆիզիկական անձ:

85. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել Ընկերության կամ լիազորված մարմնի հետ գույքային շահերով չկապված աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:

86. Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության տնօրենի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարը որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

87. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

88. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մինչամասնությամբ (այլ բաժնետերեր լինելու դեպքում):

89. Մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Ընկերության կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների փոփոխությունները ուժի մեջ են մտնում պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցելու պահից:

90. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերում պետական գրանցում իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոխհարաբերությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

91. Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

92. Եթե լուծարվող Ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

93. Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

94. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Օրենքով սահմանված կարգով՝ միաձուլման, միացման, բաժանման առանձացման և վերակազմավորման միջոցով:

95. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ քվեարկության, բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ոչ պակաս քան 2/3-ով (այլ բաժնետերեր լինելու դեպքում):

96. Լուծարային հանձնաժողովի կազմում պետք է ընգրկվեն լիազորված մարմնի ներկայացուցիչներ:

97. Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

98. Նախքան լուծարման մասին որոշում ընդունելը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի տնօրենի կողմից ներկայացված ամփոփ հաշվեկշիռը ու Ընկերության լուծարման նախագիծը:

99. Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկություններ (այդ թվում լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

100. Լուծարումն իրականացվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

101. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծվող իրավաբանական անձանց գրանցման պահից:

102. Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, նրանք վերակազմակերպված են համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

103. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու՝
2025 թվականի հուլիսի 28-ի N 121-Ա որոշման

«ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԲԸ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2025Թ.

NN	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ
1	Տնօրեն	1	350000	350000	4200000
2	Տնօրենի օգնական	1	250000	250000	3000000
3	Պատասխանատու-օպերատոր (Սանահին- Սարահարթ)	1	150000	150000	1800000
4	Պատասխանատու-օպերատոր (քաղաք Ալավերդի)	1	150000	150000	1800000
5	Հաշվապահ	1	155000	155000	1860000
6	Զոդող	1	210000 + կատարած աշխատանքի համար ստացած եկամտի 30%	210000	2520000
7	Սանտեխնիկ	2	200000	400000	4800000
8	Տանիքագործ	2	200000	400000	4800000
9	Էլեկտրիկ	1	200000	200000	2400000
10	Վարորդ	1	150000	150000	1800000
11	Բանվոր	4	150000	600000	7200000
12	Հավաքարար	13	150000	1950000	23400000
	ԸՆԴԱՄԵՆԸ	29	2105000	4965000	59580000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
28 հուլիսի 2025 թվական, N 122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱԶ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱԶ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 5-րդ գլխի դրույթների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի երկրորդ գլխի դրույթների՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը և նրա կողմից ներկայացված իրավական ակտի (իրավաբանական անձի հիմնադրման և կանոնադրության) նախագիծը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում նախադպրոցական գործունեություն իրականացնելու նպատակով հիմնադրել նոր իրավաբանական անձ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն):
2. Հաստատել Կազմակերպության Կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 1-ի:
3. Գործունեությունն իրականացնելու նպատակով կազմակերպության հիմնադրման հետ միաժամանակ Կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել (ամրացնել) գույք՝ համաձայն Հավելված 2-ի:
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել Կազմակերպության Կանոնադրության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթները և ձևակերպումները:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց.

		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ			

2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ԴՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հաստատված է ՀՀ Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու
«28» հուլիսի 2025թ.
N 122-Ա որոշմամբ

ԿԱԶՄՎԱԾ Է 28.07.2025Թ.
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ԵՎ ԲԱՂԿԱՑԱԾ Է 13 ԹԵՐԹԻՑ
ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«_____» _____ 2025Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ _____

ՀՎՀՀ _____

_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱԶ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ք.ԱԼԱՎԵՐԴԻ
2025 ԹՎԱԿԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնադաստիարակչական հաստատություն է, որն ապահովում է 2-ից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջության ամրապնդումը, դաստիարակությունը և ուսուցումը:

1.2 Հաստատության հիմնադիրն է Ալավերդի համայնքը՝ ի դեմս համայնքի ղեկավարի՝ համայնքի ավագանու որոշմամբ:

1.3 2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

1.4 Հաստատությունը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում

- կանոնադրությամբ ամրագրված իր ֆունկցիաների կատարման
- կրթական ծրագրերի իրականացման, ծավալի և որակի
- կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդների և ձևերի
- երեխաների կյանքի և առողջության պահպանման համար:

1.5 Հաստատությունը, որպես սեփականություն,ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
Հաստատությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքեր, կրում պարտականություններ և դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6 Հաստատությունն ունի ՀՀ զինանշանով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.7 Հաստատության հայերեն անվանումն է.
Հայերեն Լրիվ՝ «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
Հայերեն կրճատ՝ «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ
Ռուսերեն լրիվ՝ « Общественная некоммерческая организация «Ясли-детский сад «Ераз» общины Алаверди»
Անգլերեն լրիվ՝ "Alaverdi Community "Yeraz" Nursery-Kindergarten" Community Non-Profit Organization

1.8 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.9 Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.10 Հաստատությունում սաների հաղորդակցության և դաստիարակության լեզուն հայերենն է:

1.11 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.12 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.13 Հաստատության իրավաբանական և գործունեության հասցեն.
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, ք. Ալավերդի , Սանահին- Սարահարթ թաղամաս, 2/29-1, Ալավերդի համայնք, գյուղ Սանահին,Միկոյան 8 :

2 . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ , ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

2.2 Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի , այդ թվում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

2.3 Հաստատության հիմնախնդիրներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
2) առողջության ամրապնդումն ու խնամքը
3) մայրենի լեզվով հաղորդակցվելու, դրա հիմքերի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները
4) հաշվելու տարրական կարողությունների զարգացումը
5) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը
6) երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը
7) հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը

8) աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը
9) զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը
10) անվտանգ վարքագծի դաստիարակումը
11) դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2.4 Հաստատության գործունեությունը հիմնվում է
1) ժողովրդավարության
2) մարդասիրության
3) ներառականության
4) հանրամատչելիության
5) ազգային և համամարդկային արժեքների զուգորդման
6) անձի ազատ զարգացման
7) ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.5 Հաստատությունը պատասխանատու է՝
պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, սաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների ու ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար

2.6 Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝
1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները,
2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները,
3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը,
4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը,

2.7 Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.
2) մասնագիտական վերապատրաստումների և խորհրդատվությունների, ծնողական կրթությանը միտված դասընթացների և ծրագրերի իրականացում.
3) ճկուն ռեժիմով սանին սպասարկելու ծառայություններ.
4) սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք.
5) սաների կազմակերպված տրանսպորտային փոխադրումներ.
6) երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) ծրագրերին համապատասխան:

3.2 Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ կարիքի սաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի սաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

3.3 Հաստատության գործունեությունը կազմակերպվում է սանիտարահիգիենիկ հակահամաճարակային ու հակահրդեհային անվտանգության նորմերին համապատասխանող շենքում:

3.4 Հաստատությունը կահավորվում է համապատասխան գույքով, բժշկական ու կենցաղային անհրաժեշտ սարքավորումներով, ուսումնադիդակտիկ պարագաներով և խաղալիքներով:

3.5 Հաստատության աշխատակազմը սահմանված կարգով հաստատում է համայնքի ղեկավարը:

3.6 Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և ննդի կազմակերպման կարգը որոշվում է նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:

3.7 Անհրաժեշտության դեպքում աշխատանքային գրաֆիկի և աշխատաժամի տևողության փոփոխությունը կատարվում է համայնքի ղեկավարի թույլտվությամբ:

3.8 Հաստատության ստեղծումը և նրա գործունեության դադարեցումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.9 Հաստատության անվանակոչությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.10 Հաստատություն ընդունվում են երկուսից մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

3.11 Երեխային ընդունելությունը հաստատություն, անկախ կազմակերպական – իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի)դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

3.12 Հաստատության խմբերի առավելագուն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

ՈՒսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումը այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

3.13 Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրենության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.14 Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը պետպատվերի և համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են

1) նախադպրոցական տարիքի երեխան,

2) ծնողները /երեխայի օրինական ներկայացուցիչները /,

3)տնօրենը, մեթոդիստը, դաստիարակը, այլ մանկավարժական աշխատողներ, դաստիարակի օգնականը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

4.2 Սաների ընդունելության ժամանակ տնօրենությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին/ ծանոթացնել սույն կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

4.3 Հաստատության և ծնողների հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4 Սանների և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիման վրա:

4.5 Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային փորձը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆորակավորման բնութագրերին:

4.6 Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

4.7 Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը /այսուհետ՝ տնօրեն /:

5.2 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծում տալու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.3 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը:
2) Հաստատության գործունեության առարկայի նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:
3) Հաստատության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը:
4) Հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:
5) Հաստատության կառավարման կարգի հաստատումը:
6) Հաստատության վերակազմավորումը և լուծարումը:
7) Հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:
8) ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված և այլ հարցերի լուծումը:

5.4 Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.5 Համայնքի ղեկավարը՝

1)Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

2) Վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ:

3) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները:

4) Լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները:

5) Վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

6) Համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության համար,

7) Հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

8) Իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն,

9) Համայնքի ավագանու համաձայնությամբ նշանակում է հաստատության տնօրենին:

5.6 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորում է խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Հաստատությունում կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգեբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

5.7 Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:
Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

5.8 Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության

գործունեությունն ու կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների,սույն կանոնադրության և Լնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.9 Տնօրենը՝

1) Առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ
2) Սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները
3) Նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը
4) ՀՀ օրենսդրությամբ,համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը,այդ թվում՝ ֆինանսական միջոցները:
5) Տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր:
6) Աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:
7) Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:
8) Համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը
9) Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմանում արձակում է հրամաններ. հրահանգներ, տալիս ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
10) Իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն, ստեղծում անհրաժեշտ պայմաններ նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար:
11)Վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների նկատմամաբ:
12) Ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը:
13) Կազմում է հաստատության հաստիքային ցուցակը ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը:
14) Իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմինների չվերապահված լիազորություններ:
15)Պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչիչ և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան

ուսումնադաստիարակչականգործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

5.10 Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման /հրամանի/ համաձայն տնօրենի լիազորությունները իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը :

5.11 Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) Իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը:
2) Ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը:
3) Պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար:
4) Կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը,
5) ՈՒսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն:
6) Դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների դրույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին:
7) Կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

5.12 Դաստիարակը՝

1) Պարտավոր է պահպանել սաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը:
2) Պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար:
3) Մշտապես համագործակցում է սաների ընտանիքների հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

5.13 Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1)Տիպային ծրագրին համապատասխան՝ դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը:
2) Ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

5.14 Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչը՝

1)Սաներին ուսուցանում է տիրապետել վարժությունների կատարման տեխնիկային և հմտություններին, ձևավորում է նրանց բարոյակամային որակները ապահովում է սաների անվտանգությունը ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ժամանակ:

2) Բուժաշխատողների հետ միասին հսկում է սաների առողջական վիճակը, պատասխանատվություն է կրում նրանց կյանքի, առողջության համար:
3) Ծնողների շրջանում պարբերաբար կատարում է բացատրական աշխատանք՝ պարապմունքներին սաների նախապատրաստման ուղղությամբ:

5.15 Հոգեբանը՝

1) Աշխատանքներ է տանում սաների հոգեկան առողջության և անձի զարգացման ապահովման ուղղությամբ:
2) Բացահայտում է հուզական և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սաներին, ցույց է տալիս սոցիալ- հոգեբանական աջակցություն:
3) Մասնակցում է սաների, ծնողների (երեխայի օրինական ներկայացուցիչների) հոգեբանական կուլտուրայի ձևավորմանը:

5.16 Լոգոպետը՝

1) Ախտորոշում է խոսքի խանգարման խնդիրները:
2) Տեղեկություններ է հաղորդում տվյալ խոսքային խանգարման վերաբերյալ:
3) Կազմում է լոգոպետական աշխատանքի անհատական ծրագիր:

5.18 Տնտեսական մասի վարիչը /տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը / ՝

1) Կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի, սարքավորումների ստացումն ու պահպանումը:
2) Մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր հայտերի կազմմանը:
3) Հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների , վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելուն:
4) Պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

6.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

6.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

6.5 Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

6.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը

6.7 Հաստատությունն իրավունք չունի

- ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
- ամրացված գույքի վարձակալության ժամկետը սահմանել մեկ տարուանից ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

6.8 Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:

6.9 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:
Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմադիրը:

6.10. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

6.11. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.12 . Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները
- բարեգործական նպատակային ներդրումները
- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

6.13 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.14 Հաստատության ծնողական վճարները ենթակա են փոխանցման Ալավերդու համայնքապետարանի բյուջե:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2025 թվական, N 123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱԶ» ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Երազ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			

8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱԼԱՎԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2025
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 28- Ի N 123- Ա
ՈՐՈՇՄԱՄԲ

«ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱՋ» ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ

1. Աշխատակիցների թվաքանակը՝
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՊԱՇՏՈՆԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Տնօրեն	1	200000	200000
2	Մեթոդիստ (Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ)	1,25	130000	162500
3	Դաստիարակ (Սանահին- Սարահարթ)	6,25	120000	750000
4	Դաստիարակ (Մանահին գյուղ)	1,25	120000	150000
5	Դաստիարակի օգնական (Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ)	6,6	104000	686400
8	Երաժիշտ Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ	1,5	110000	165000
	Հոգեբան	1	110000	110000
9	ֆիզիրահանգիչ	1	105000	105000
10	Հաշվապահ	1	116000	116000
11	Գործավար	0,25	104000	26000
12	Տնտեսվար(Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ)	1	104000	104000
	Բուժքույր (Սանահին գյուղ)	0,5	104000	52000
13	Բուժքույր (Սանահին-Սարահարթ)	1	104000	104000
15	Դերձակ	0,25	104000	26000
16	Խոհարար (Սանահին -Սարահարթ)	1	104000	104000
17	Խոհարար (Սանահին գյուղ)	1	104000	104000
18	Խոհարարի օգնական (Սանահին - Սարահարթ)	1	104000	104000
19	Դռնապան (Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ)	1,75	104000	182000
20	Հավաքարար (Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ)	1	104000	104000
21	Լվացարար (Սանահին - Սարահարթ)	0,25	104000	26000
22	Օժանդակ բանվոր (Սանահին գյուղ, Սանահին - Սարահարթ)	0,75	104000	78000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**30,6**		**3458900**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դավիթ Ղումաշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
28 հուլիսի 2025 թվական, N 124-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ, 48[1]-րդ հոդվածներով, 59-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ և 74-րդ հոդվածներով, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ կառավարության 14.01.2010թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկվածպետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14[1] կետով և 46.2 կետի ե) ենթակետով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով պետական սեփականության իրավունքի N 24032021-06-0043 վկայականը, «Մայնովա Սոյուշնս» ՍՊ ընկերության տնօրեն՝ Ռ. Մելիքջանյանի կողմից 03/06/2025թ. ներկայացված գրությունը, ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանում 13/06/2025 թվականին իրականացված քննարկման արձանագրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ալավերդի համայնքի գյուղ Թեղուտ, 2-րդ թաղամաս 55/1 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, կադաստրային 06-037-0321-0006 ծածկագրով, 6.35708 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով, տարեկան 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ վարձավճարով, կառուցապատման իրավունքով, առանց մրցույթի «Մայնովա Սոյուշնս» ՍՊ ընկերությանը տրամադրելուն:
2. Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ պատրաստել հողաշինարարական գործ և ներկայացնել մարզպետին:
4. Դրական եզրակացության դեպքում ապահովել կառուցապատման իրավունքի պայմանագրի կնքման գործընթացը «Մայնովա Սոյուշնս» ՍՊԸ-ի հետ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2025 թվական, N 125-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0088-0001, 06-002-0088-0002, 06-002-0088-0003, 06-002-0088-0004, 06-002-0088-0005, 06-002-0088-0006, 06-002-0088-0007 ԵՎ 06-002-0088-0008 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածներով, 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի VI գլխով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21) ենթակետով, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ ներքոնշյալ քաղաքացիներին պատկանող հողամասերի տեղադիրքը նպատակահարմար է համայնքի զարգացմանը նպաստող դպրոցաշինության համար և որ փոխանակություն կատարելուց հետո փոխանակված համայնքային հողամասերը հետագայում՝ դպրոցաշինության նպատակով նվիրաբերվելու է Հայաստանի Հանրապետությանը, հիմք ընդունելով քաղաքացիներիկողմից տրված գրավոր համաձայնությունը, սեփականության իրավունքի N 18062025-06-0049, N 10062025-06-0071, N 03072025-06-0030, N 1196485, N 1246971 վկայականները, համայնքային սեփականության N 22072025-06-0023, N 22072025-06-0009, N 22072025-06-0025, N 21072025-06-0049, N 21072025-06-0070, N 21072025-06-0039 վկայականները, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0088-0001 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի փոխանակությանը քաղաքացիներ Ալեք Նորայրի Էվոյանին, Հասմիկ Նորայրի Էվոյանին, հասմիկ Օնիկի Մարգարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0076-0020 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի հետ:

2. Տալ համաձայնություն համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0088-0002 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի փոխանակությանը քաղաքացիներ Ալիսա Վարդանի Մոսինյանին, Անահիտ Արտաշի Մոսինյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0076-0015 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի հետ:
3. Տալ համաձայնություն համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0088-0003, 06-002-0088-0004 և 06-002-0088-0005 ծածկագրերով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասերի փոխանակությանը քաղաքացիներ Անդրանիկ Ռուբիկի Մոսինյանին, Մարգարիտա Անդրանիկի Մոսինյանին, Գոհար Անդրանիկի Մոսինյանին, Հասմիկ Անդրանիկի Մոսինյանին և Մարիետա Հովհաննիսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0076-0011 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի հետ:
4. Տալ համաձայնություն համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0088-0006 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի փոխանակությանը քաղաքացիներ Կառլեն Վարդանի Երիցյանին, Սուսաննա Վանուշի Նորեկյանին և Տաթևիկ Վարդանի Երիցյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0076-0004 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի հետ:
5. Տալ համաձայնություն համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0088-0007 և 06-002-0088-0008 ծածկագրերով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասերի փոխանակությանը քաղաքացիներ Վաղինակ Վոլոդյայի Սիմոնյանին, Սեդա Բենիկի Ավետյանին, Ռուբեն Վաղինակի Սիմոնյանին և Նարեկ Վաղինակի Սիմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, Սանահին գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-002-0076-0019 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասի հետ:
6. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և յուրացման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

7. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ քաղաքացիների հետ կնքելու հողամասերի փոխանակության մասին պայմանագրեր:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
28 հուլիսի 2025 թվական, N 126-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով տրանսպորտային միջոցների YB195597, YB195571, YB195554 և YH247759 հաշվառման վկայագրերը, «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊ ընկերության կողմից 11.04.2025թ. կազմված գնահատման հաշվետվությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել բաց (դասական) աճուրդային եղանակով օտարելու Ալավերդու համայնքապետարանին պատկանող ներքոնշյալ՝ թվով 4 հատ տրանսպորտային միջոցները.
   1.1 «GAZ 3221» մակնիշի, 936 CQ 61 հաշվառման համարանիշով, հաշվառման վկայագրի համար՝ YB195597, նույնացման համարը՝ XTH3221 00V0043493, թողարկման տարեթիվը 1997, մեկնարկային գինը՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
   1.2 «MERCEDES-BENZ» մակնիշի, 930 CQ 61 հաշվառման համարանիշով, թեթև մարդատար ավտոմեքենան՝ հաշվառման վկայագրի համար՝ YB195571, նույնացման համարը՝ WDB2020181A760438, թողարկման տարեթիվը 1999, մեկնարկային գինը՝ 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:
   1.3 «VAZ 21061» մակնիշի, 926 CQ 61 հաշվառման թեթև մարդատար ավտոմեքենան՝ հաշվառման վկայագրի համար՝ YB195554, նույնացման համարը՝ XTA210610M2514977, թողարկման տարեթիվը 1990, մեկնարկային գինը՝ 290 000 (երկու հարյուր իններսուն հազար) ՀՀ դրամ:
   1.4 «UAZ» մակնիշի, 597 CP 61 հաշվառման թեթև մարդատար ավտոմեքենան՝ հաշվառման վկայագրի համար՝ YH247759, նույնացման համարը՝ XTT315196B0597968, թողարկման տարեթիվը՝ 2011, մեկնարկային գինը՝ 2 180 000 (երկու միլիոն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով:
3. Հանձնարարել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին.
   3.1 Վերը նշված գույքի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:

3.2 Վճարումը կատարել ՀՀ արժույթով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
13.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
14.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
15.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

2025թ., հուլիսի 28,
Լոռու մարզ, ք. Ալավերդի